շիրմի» հետ կապված, նույն իսկ Գրիգոր յեպիսկոպոսի յեղբոր գերեզմանն այստեղ է, և Հոհան վանահայրն էլ նույն յեպիսկոպոսի հիշատակը Հավապտուկում է հավերժացնում։ Այս հանգամանքները բնականաբար այն միտքն են զարթեցնում, թե հիշված անձինք կարող են Խաղբակեան տոհմի հետ ազգակցական առնչություն ունենալ, թեև հաստատել կարելի չէ, որովհետև Հավապտուկը կարող եր մի ուրիշ յերկրորդական տոհմի հանգստարան եւս լինել։

Բայց մենք ունինք մի շարք խաչքարեր և արձանագրություններ, վորոնք բուն Խաղբակյան տոհմի հիշատակներ են։ Դոցանից հնագույնը մի խաչքար է Հավապտուկ լերան հյուսիսային կողին, Վանք գյուղից դեպի Հավապտուկ կամ Դարբասները տանող ճանապարհի վերա, տարաբաղդաբար կիսով չափ փչացած.

Ի թվիս ՈԻԲ (=1173) ի հա(յրապե)տութե տն Ստեփան/ոսի և ի թագավորո . . . Սրահան գս որդի Ճաջռա . . . . կանգն եցի զխաչս ի . . . .
ր։ ՜Ոռ? որ կարդ . . . . . . : .

Նույն Սրահանգը մի խաչ էլ ունի կանգնած յուր հոր հիշատակին զարձյալ նույն տեղում։

Ես Սրըհանգս կանգն/եցի զխաչ սիմ՝ հաւրն Ջաջու/ռա, որք երկրպագէք ... (կոտրած) ,..

Մի յերրորդ խաչքար՝ կից սրան՝ 1214 թ. նույնպես կապված է Սրահանգի անվան հետ. խաչի կանգնողի անունը պարզ չէ, կարող է կարդացվել Փայչաղ կամ Փայճաղ, բայց ավելի հավանական է առաջինը. վորովհետև չորրորդ տողի մեջ «աչերս» (=խաչերս) բառի չ-ի նման է ընդգծվածը, բոլորգրի ձևով։

Ի թվիս ՈԿԳ էր
Ես Փայչաղա(?)յս ... Սրա
յհագին(s!)կ(?)ազն ... ի զա
աչերս ի փրկութիւն հո
գոյ իմո եւ բարէախաս (s!)
առ քս ծնաւղաց մերոց*։

Այս տեղ հիշված Ջաջուռը կամ Ճաջուռը նույն չէ մեր հիշատակարանի Ջաջուռի՝ (Բ) Վանենու հոր հետ, այլ նրա ավագ ազգականներից մեկը, հավանորեն պապը, իսկ Սրահանգը Խաղբակի յեղբայրը կամ Ջաջուռ Բ-ի հորեղբայրը։ Բլրի գլխին՝ յեկեղեցու մոտ՝ գտնվում է մի մեծ խաչ, արձանագրության մի մասը գետնի մեջ թաղված, կարդացվում է այսքան.

---

* Այս յերեք արձանագրություննն էլ առաջին անգամ են հայտնվում բանասիրության և արժանի են ուշադրության նաև հնագրական տեսակետով, մի քանի տառերի շեղագրի նմանությամբ։ Յերրորդ արձանագրության մեջ յերկրորդ տողի «Փայչաղայս» բառի մեջ չ տառը, ինչպես և չորրորդ տողի «աչերս»-ի մեջ—ա-ն բոլորովին տարորինակ են իրենց ձևով. նաև յերրորդ տողում «կազն», կ-ն, գլխի վայր գրված։

Թի ՈԼԳ (=1184) Ես Հասան որդի Խաղբա ...*

Քանդակված է յելնդավոր մի ձիավոր, գլխին սաղավարտ, միրուքավոր, յերկար նիզակը աջին, ձախով բռնել է սանձը. ձիավորի ձախ կողքից կախված է լայն և կարճ սուր։ Ձիու պարանոցը աղեղնաձև, գլուխը քաշ ձգած, պոչը հանգույց։ Ձիավորի առաջ նկատվում է աշտարակի նման մի բան, վորի հետևից մի մարդու գլուխ. այս մասը կիսով չափ թաղված է հողի մեջ։

Մի այլ մեծ խաչքար ունի այսպիսի արձանագրություն.

Ես Վասակ կանգնեցի զխաչս ի տապանի եղբաւր իմոյ Աբուսի. Թիւ ՈԽ.

Խաչի վերևի ճակատից՝ դեպի հորիզոնական թևերը՝ կախված է մի զույգ վողկույզ, իսկ ներքևից՝ ձողի վերա բարձրանում են դեպի նույն թևերը մի մի քշոցաձև բոլորակ՝ մեջը խաչ։ Մի կողմը քանդակված են յերկու յելնդավոր մարդկային ֆիգուր, վորոնցից մեկի գոտուց հորիզոնական ձևով կախված է մի յերկար սուր, աջ ձեռքին բաժակ բռնած, ձախը կրծքին. գլխին սաղավարտ։ Սորա դիմաց կանգնած է մյուսը, ձախով փարչ բռնած, աջը կրծքին։ **

Ովքեր են Հասան և Վասակ՝ խաչարձանների կանգնողները. Արձանագրություններից յերևում են, վոր Հասան և Ջաջուռ Բ. յեղբայրներ են, մի և նույն Խաղբակի վորդիքը։ Անհավանական չէ, վոր այս Հասանը նույն լինի Օրբելյանի յիշած Գրիգոր Բաղաց թագավորի փեսա Հասանի հետ, վոր խաչենցի եր, Գետաքարից։ Նորա վերադարձը հայրենիք կատարվել է 1170 թ. ին։***

Գետաքարը Խաղբակյանների նստոցն է, Հավապտկի հարավ արևելյան փեշին։ Ժամանակն ու տեղը, գրեթե, հաստատուն հիմք կարող են ծառայել նույնացնելու այս յերկու Հասանները։ Վասակը նույնպես Խաղբակի վորդին պիտի լինի, և նույն Պռոշյանց իշխանության հիմնադրի հետ, վոր կանգնել է յուր յեղբոր հիշատակին այս խաչքարը, յերբ դեռ եւս Խաչենում եր և չեր հաստատված Վայոց ձորում իբրև կողմնակալ—իշխանապետ։ Վանենու հայր Ջաջուռը, վորին անվանեցինք Ջաջուռ Բ., ունի յերկու արձանագրություն, յերկու մեծ և գեղեցիկ խաչքարերի վերա, բլրի գագաթին՝ վանքի մոտ. դոցանից մեկը նա կանգնել է յուր Սըճպատ, մյուսը Հասան վորդու տապանի վերա, յերկուսն էլ 1224 թ.

Թուականն ՈՀԳ էր ես Ջաջ/ուռ
որդի / Խաղբակայ / կանգնե / ցի

---

* I. Орбели. Бытовые рельефы на Хаченских крестных камнях XII и. XIII вв. СП. 1915. Оттиск из записок Восточ. отд. имп. русск. археологического О-ва. յեր. 3 (329)։ Օրբելին կարդում է. «ՈԼԳ. ես Հասան որդի Խանբակա .. ևն.

** Խաչքարերի բարձրաքանդակների համար տ. Օրբելու վերոհիշյալ հոդվածը։

*** Օրբ. 337